ՀԱՅՈՑ ԱԶԳԱԾԱԳՄԱՆ ԽՆԴԻՐՆ ԸՍՏ ՎԵՐՋԻՆ ՀՆԱԾԻՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ԱՐՄԷՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ, ԱՐԱՄ ՊԱԼԵԱՆ
alpehist@gmail.com
araratinfo@gmail.com

Վերջին տարիներին գիտութեան զարգացումը հնարաւոր դարձրեց հնագոյն մարդկանց կմախքի քունքոսկրի՝ ականջի ետեւի վիմային մասից (լատին. pars petrosa) առանձնացնել եւ ուսումնասիրել հազարամեակներ պահպանուած ծինային նիւթը, ինչը նոր լիցք տուեց հնաձինական (paleogenetic, archaeogenetic) ուսումնասիրութիւններին: Եւ, ներկայումս հնդեւրոպաբանութեան մէջ, լեզուաբանութեանը եւ հնագիտութեանը հաւասար, սկսել են էական դեր կատարել նաեւ այդ ուսումնասիրութիւնները, որոնք, կարելի է ասել, նոր էջ են բացում հին ժողովուրդների, նրանց նախահայրենիքի, գաղթերի եւ տարաբնակութեան հարցերում: Այդ ուսումնասիրութիւնները էական նիւթ են տալիս նաեւ հնագոյն հայերի նոյնացման եւ այսպիսով՝ հայոց ազգածագման առաւել դժուար խնդրի լուծման գործում ճշտում եւ լրացնում են որոշ տեսակէտեր եւ բացառում միւսները: Ստորեւ, առաւելապէս կենտրոնանալով խնդրի բանասիրական եւ պատմական տեսանկիւններին, համառօտակի կը ներկայացուեն արդիւնքներն ու եզրակացութիւնները[1]:

ՎԱՂՆՋԱՀԱՅԵՐԷՆ ԵՒ ՎԱՂՆՋԱՀԱՅԵՐ

Գիտութեան մէջ կարելի է առանձնացնել հին ժողովուրդների ժառանգորդութեան երեք հայեցակէտ՝ կենսաբանական, մշակութային եւ լեզուական: Ակնյայտ է, որ հայ ժողովուրդը Հայկական Լեռնաշխարհի հնագոյն բնակիչների կենսաբանական եւ մշակութային ժառանգորդն է եւ ուրեմն վիճելի ու խնդրայարոյց է մնում հիմնականում հայերի լեզուական նախնիների նոյնացման հարցը[2]: Մենք չենք կարող, ասենք, Ֆրանսայի, Սպանիայի, Ռուսաստանի, Յունաստանի եւ շատ այլ տարածքների հին բնակիչներին կոչել ֆրանսացի, սպանացի, ռուս, յոյն եւ այլ նոր ցեղանուն-

---

[1] Խնդրի հնագիտական եւ հնաձինական տեսանկիւնների վերաբերեալ առաւել մանրամասն տե՛ս՝ Ա. Պետրոսեան, Ա. Պալեան, «Հայոց ազգածագման խնդիրը վերջին հնագենետիկական տուեալների լոյսի ներքոյ», *Միգրացիոն գործընթացները Հայկական Լեռնաշխարհում հնագոյն շրջանից մինչեւ 20-րդ դարասկիզբ (գիտաժողովի նիւթեր)*, Ե. Գրեկեան (խմբ.), ՀԱԻ հրատ., Երեւան, 2023, էջ 7-24:

[2] Այդ մասին մանրամասն տե՛ս՝ I. M. Diakonoff, *The pre-history of the Armenian people*, Caravan books, Delmar, New York, 1984, էջ 1-4. նաեւ՝ Ա. Պետրոսեան, *Հայ ժողովրդի ծագման խնդիրը*, Անտարես, Երեւան, 2017, էջ 13-21:

ներով, քանի դեռ նրանք խօսել են այլ լեզուներով: Հնում հենց լեզուն է եղել ժողովուրդների տարբերակիչ առաջնային յատկանիշը, եւ խօսելով հայ ժողովրդի ծագման եւ ձեւաւորման մասին, քննարկումը պէտք է սկսել հայերէնի հնագոյն տարբերակներով խօսող մարդկանց նոյնացման խնդրից: Ստորեւ օգտագործում ենք Գէորգ Ջահուկեանի առաջարկած *վաղնջահայերէն* (Proto-Armenian)[3] եզրը, որով բնորոշւում է հայերէնի՝ հնդեւրոպական հանրոյթից առանձնանալուն յաջորդած ինքնուրոյն գոյութեան սկզբնական շրջանը: Իսկ այդ լեզուով խօսող մարդիկ համապատասխանաբար կը կոչուեն *վաղնջահայեր* (Proto-Armenians):

ՀՆԴԵՒՐՈՊԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՅՐԵՆԻՔԸ ԵՒ ԳԱՂԹԵՐԸ

Հայերէնը հնդեւրոպական լեզու է՝ ազգակից արդէն հնում Հնդկաստանից մինչեւ Արեւմտեան Եւրոպա տարածուած բազմաթիւ լեզուների (անատոլիական, թոխարական, հնդիրանական, իտալեան, կելտական, գերմանական, սլաւոնական, բալթեան, յունարէն, ալբաներէն եւն.): Այդ լեզուների նախնին՝ հնդեւրոպական մայր լեզուն կամ «նախալեզուն», պիտի խօսուելիս լինէր նախապատմական ժամանակներում, ինչ-որ մի տարածքում՝ «նախահայրենիք»ում: Այդ տարածքը տեղայնացնելու լուծումները փնտռուել են առասպելաբանական, լեզուաբանական, մարդաբանական, հնագիտական եւ ծինային տուեալների հիման վրայ: Արդէն վաղուց իվեր առաւել հաւանական է համարուել նախահայրենիքի տեղայնացումը Սեւ եւ Կասպից ծովերի միջեւ, վոլգեան եւ մերձսեւծովեան տափաստաններում, ժամանակակակից Ռուսաստանի, Ուկրաինայի տարածքներում[4]:

Մեր նիւթի համար անհրաժեշտ է յիշել հնդեւրոպական նախահայրենիքի տեղայնացման եւս երկու վարկած (թէեւ դրանցով, իհարկէ, եղած վարկածների թիւը չի սահմանափակւում): 1970ականների սկզբներին խորհրդային լեզուաբաններ Թամազ Գամկրելիձէն եւ Վիաչեսլաւ Իւանովը առաջ են քաշում հնդեւրոպացիների՝ Հայկական Լեռնաշխարհից եւ յարակից տարածքներից ծագելու գաղափարը[5]: Ըստ այդ վարկածի սկզբնապէս եղել է հնդեւրոպացիների նշանակալի գաղթ Հայկական Լեռնաշխարհից հարաւռուսական տափաստաններ, որտեղից են միայն իրենց պատմական

---

[3] Գ. Ջահուկեան, *Հայոց լեզուի պատմութիւն. նախագրային ժամանակաշրջան*, ՀՀ ԳԱ հրատ., Երեւան, 1987, էջ 25:

[4] Այսպես՝ Եոհան Տիշլէրը բերում է 1851-1992ի տարբեր գիտնականների կողմից առաջ քաշուած յիսուն տեղայնացումներ, որոնցից ամենայաճախ հանդիպողը հարաւային Ռուսաստանն է (J. Tischler, *Bemerkungen zur Urheimatfrage*, Novalis Indogermanica, Festschrift für Günter Naumann zum 80, Geburtstag, Leykam, Graz, էջ 477-78):

[5] T. Gamkrelidze, V. Ivanov, *Indo-European and the Indo-Europeans*, de Gruyter, Berlin and New York, 1995.

հայրենիքները տեղաշարժուել հնդեւրոպական լեզուներ կրողների նշանակալի մասը[6]:

Հնդեւրոպական ժողովուրդների բաժանումը իրարից եղել է բարդ, եւ ակնյայտօրէն՝ ոչ-համաժամանակեայ մի գործընթաց: Ըստ Է. Հ. Սթըրթեւանթի, խեթերէնն ու միւս անատոլիական լեզուների (լուվիերէն, լիդիերէն, լիկիերէն, կարիերէն եւն.) նախնի լեզուն անջատուել են հնդեւրոպական վաղնջական՝ այսպէս կոչուած «հնդխեթական» (Indo-Hitttie) կամ «հնդանատոլիական» (Indo-Anatolian) մայր լեզուից նշանակալիօրէն աւելի վաղ, քան միւսները[7]: Այնպէս որ խեթերէնը կարելի է բնութագրել ոչ թէ որպէս հնդեւրոպական «քոյր լեզու», ինչպէս միւսները, այլ՝ «մօրաքոյր լեզու»: Անատոլիական լեզուներից յետոյ մայր լեզուից անջատուել են թոխարական լեզուները, ապա միւսները:

Վերջին տարիների հնաձինական ուսումնասիրութիւնները վերջնականապէս ճշտեցին մեր պատկերացումներն այս հարցում: Արդէն վստահօրէն կարելի է պնդել, որ աշխարհում ներկայումս խօսուող հնդեւրոպական լեզուները այդ տարածքներն են տեղաշարժուել Պոնտոս-կասպեան (անտառա)տափաստանային նախահայրենիքից[8]: Իսկ 2022ին հրատարակուած միքանի կարեւոր յօդուածներ նշանակալի լոյս են սփռում նաեւ հայոց ազգածագման եւ յարակից խնդիրների վրայ[9]: Ըստ այդ տուեալների, հնդխե-

---

[6] Այստեղ արժէ նշել, որ չնայած Գամկրելիձէ-Իւանովի վարկածի՝ մեզանում գտած զգացմունքային վերաբերմունքին, այն երբեք լայն ընդունելութիւն չի ունեցել հարցին իրազեկ քիչ թէ շատ նշանաւոր գիտնականների շրջանում, յատկապէս Արեւմուտքում (Պետրոսեան, *Հայ ժողովրդի ծագման,* էջ 139-40):

[7] E. H. Sturtevant, "On the Position of Hittite among the Indo-European languages," *Language*, 2:1926, էջ 25-34:

[8] Հնաձինական նիւթը ցոյց է տալիս այդ տարածքներին բնորոշ ծիներ ունեցող մարդկանց նշանակալի տեղաշարժ Ք.ա. երրորդ հազարամեակից դէպի իրենց ներկայ հայրենիքները (Հնդկաստան, Իրան, Հարաւային Կովկաս, Հայկական Լեռնաշխարհ, Բալկաններ, Եւրոպա), որը ժամանակագրօրէն համապատասխանում է նաեւ այդ տարածքներում հնդեւրոպացիների բերած փոփոխութիւններին վերագրուող գաղթերի հետ, ինչը միարժէքօրէն հաստատում է այդ դրոյթը (M. E. Allentoft, et al., "Population Genomics of Bronze Age Eurasia," *Nature*, 522:2015, էջ 167-72. նաեւ՝ W. Haak, I. Lazaridis, N. Patterson, "Massive Migration from the Steppe was a Source for Indo-European Languages in Europe," *Nature*, 522:2015, էջ 207-11. նաեւ՝ E. Jones et al., "Upper Palaeolithic Genomes Reveal Deep Roots of Modern Eurasians," *Nature Communications*, 6:2015, բղ 8912. նաեւ՝ I. Lazaridis, D. Nadel, G. Rollefson, "Genomic Insights into the Origin of Farming in the Ancient Near East," *Nature*, 536:2016, էջ 419-24. նաեւ՝ D. W. Anthony, *Ten Constraints that Limit the Late PIE Homeland to the Steppes*, *Proceedings of the 33rd Annual UCLA Indo-European Conference*, Buske, Hamburg (in print), էջ 11-12:

[9] I. Lazaridis, et al, "The Genetic History of the Southern Arc: A Bridge between West Asia and Europe," *Science* (www.science.org/doi/10.1126/science.abm4247). նաեւ՝ I.

թական նախալեզուի կրողները բնակուել են Հայկական Լեռնաշխարհում, Անդրկովկասում եւ մերձակայ շրջաններում: Այստեղից նրանց մի մասը Ք.ա. 5րդ հազարամեակի սկզբից Կովկասի վրայով անցել են Հարաւային Ռուսաստանի տափաստանային տարածքները, միւսը՝ արեւմուտք՝ Փոքր Ասիա: Տափաստան անցած հնդխեթական հատուածը որոշակի լեզուական զարգացում է ապրել եւ խառնուել տեղացիների հետ: Ձեւաւորուել է ներկայիս բոլոր կենդանի հնդեւրոպական լեզուների մայր հնդեւրոպական նախալեզուն: Այստեղից են տարբեր ուղղութիւններով դէպի իրենց յետագայ հայրենիքները գաղթել այդ ժողովուրդների լեզուական նախնիները: Մի մասը նրանցից անցել է Եւրոպա, միւսը՝ Միջին Ասիա, այնտեղից՝ Իրան եւ Հնդկաստան, իսկ երրորդը, նորից Կովկասի վրայով՝ Անդրկովկաս: «Տափաստանային» ծիների կրողները Անդրկովկասում յայտնւում են Ք.ա. 3րդ հազարամեակների կէսերից, եւ նրանց ստեղծած միջինբրոնզէդարեան հնագիտական մշակոյթները տարածւում են լեռնաշխարհի հիւսիսարեւելեան տարածքներից մինչեւ Ուրմիա եւ Վան լճերի աւազանը, Մուշի եւ Կարինի շրջանները:

Հայկական Լեռնաշխարհից Փոքր Ասիա անցած հնդանատոլիացիների ժառանգներն են հին անատոլիական ժողովուրդները: Այդտեղ, թէեւ արդէն Ք.ա. 2րդ հազարամեակի սկզբներից հանդէս են գալիս խեթերէն անուանաբանութեան հետքեր, ապա եւ խեթերէն ու լուվիերէն գրաւոր աղբիւրներ, սակայն տափաստանային ծիների կրողներ չեն հանդիպում մինչեւ Ք.ա. 2րդ հազարամեակի վերջը, այսինքն՝ խեթերի եւ միւս հին անատոլիական ժողովուրդների լեզուական նախնիները չեն եկել տափաստանային նախահայրենիքի տարածքներից, այլ եղել են Հայկական Լեռնաշխարհի, Փոքր Ասիայի եւ յարակից տարածքների հին բնակիչները[10]:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ Ք.Ա. 4-2ՐԴ ՀԱԶԱՐԱՄԵԱԿՆԵՐՈՒՄ ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀՆԱԾԻՆԱԿԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐԻ

Պղնձէ դարից յետոյ՝ Ք.ա. չորրորդ հազարամեակի կէսերից մինչեւ երրորդ հազարամեակի կէսերը, Հայկական Լեռնաշխարհում եւ յարակից շրջաններում ծաղկում է վաղբրոնզէդարեան կուր-արաքսեան մշակոյթը (ընդգրկել է Դաղստանը, Անդրկովկասը, Հայկական Լեռնաշխարհը եւ յետագայում տարածուել որոշ աւելի հարաւային տարածքներ՝ Սիրիա, Ի-

Lazaridis et al, "A Genetic Probe into the Ancient and Medieval History of Southern Europe and West Asia," *Science* (www.science.org/doi/10.1126/science.abq0755). նաեւ՝ I. Lazaridis et al, "Ancient DNA from Mesopotamia Suggests Distinct Pre-pottery and Pottery Neolithic Migrations into Anatolia, " *Science* (www.science.org/doi/10.1126/science.abq0762).

[10] PdB Damgaard, R. Martiniano et al., "The first horse herders and the impact of early Bronze Age steppe expansions into Asia," *Science*, 360:2018, էջ 6396. նաեւ՝ Lazaridis, et al, "The Genetic History of the Southern Arc," էջ 11-12:

րան): Նրա բնորոշ յատկանիշերն են հասարակութեան վառ արտայայտուած շերտաւորման բացակայութիւնը եւ խաղաղ, երկրագործական կացութաձեւը բնակավայրերում: Ք.ա. երրորդ հազարամեակի կէսերից՝ սկզբում Անդրկովկասի հիւսիսային տարածքներում, ապա եւ Հայաստանում, սկսում են ի յայտ գալ նոր իրողութիւններ՝ նոր, երբեմն ռազմաշունչ գաղափարախօսութեամբ մարդկանց ներհոսք, հասարակութեան վառ արտայայտուած շերտաւորում, առաջնորդների ճոխ թաղումներ (այսպէս կոչուած՝ վաղկուրգանային [ռուս. kurgan «դամբանաբլուր» բառից, որով կոչում են հարաւռուսական տափաստանների բնորոշ թաղումները] եւ վաղթռեղքեան մշակոյթներ, տարածուած Անդրկովկասում եւ Հայկական Լեռնաշխարհում, մինչեւ Կարին): Անհետանում է ողջ հին մշակոյթը, վերանում են բնակավայրերը, ի յայտ են գալիս նոր, նախորդից բացարձակապէս տարբեր միջինբրոնզէդարեան մշակոյթներ, եւ երկար դարեր լեռնաշխարհում տիրապետող է դառնում (կիսա)քոչուորական կենցաղը (այսպես կոչուած Թռեղք-վանաձորեան, Սեւան-արցախեան, Կարմիրվանքեան եւ Կարմիրբերդեան մշակոյթներ, տարածուած Հայկական Լեռնախարհի մեծ մասում, մինչեւ Կարին, Վան եւ Ուրմիա լճերի աւազաններ): Այս ներգաղթողները շատ առումներով համապատասխանում են հնդեւրոպացիների վերաբերեալ յայտնի պատկերացումներին: Ընդ որում՝ հնագիտական եւս ակնարկում է ներգաղթողների սկզբնական տարածքը՝ հնդեւրոպական տափաստանային նախահայրենիքը[11]:

Ներգաղթեալները, իհարկէ, ժամանակի ընթացքում խառնուել են Հայկական Լեռնաշխարհի հին բնակչութեան հետ, թէեւ հայրագծային (patrilineal) ծիներով նշանակալիօրէն պահպանելով տափաստանային ժառանգութիւնը[12] (այսպէս, ՀՀ տարածքի բնակչութեան մէջ ուշբրոնզի դարից մինչեւ Ուրարտուի անկումը տափաստանային Y քրոմոսոմային R1b1 եւ I2 հապլոխմբերը[13] կազմել են ընդհանուրի երեք քառորդը): Այս մարդիկ եւ

---

[11] Պ. Աւետիսեան, *Հայկական լեռնաշխարհը 24-9րդ դարերում (սոցիալ-մշակութային ձեւափոխութիւնների դինամիկան ըստ հնագիտական տուեալների),* ՀԱԻ հրատ., Երեւան, 2014, էջ 44. նաեւ՝ Ա. Պետրոսեան, «Հնդեւրոպական նախահայրենիքի խնդիրը եւ վաղնջահայերէնը», *Պատմաբանասիրական հանդէս*, 1:2014, էջ 196-207. նաեւ՝ Պետրոսեան, *Հայ ժողովրդի ծագման*, էջ 141-42:

[12] Ակնյայտ է, որ մարդկանց՝ նորանոր տարածքների նուաճման եւ իւրացման ժամանակ էական դեր են կատարել տղամարդիկ: Մասնաւորապէս, հնդեւրոպական գաղթերի դէպքում պատանեկան ռազմական եղբայրութիւններն են, որ առաջինն են նուաճել եւ բնակեցրել նոր տարածքները, ապա՝ խառնուելով տեղական կանանց հետ սերունդներ թողել եւ տարածել նրանց մէջ իրենց լեզուն (տե՛ս յատկապէս՝ B. Sergent, “Les troupes de jeunes hommes et l'expansion indo-européenne,” *Dialogues d'Histoire Ancienne*, 29(2):2003, էջ 9–27):

[13] Y-ը երկու սեռական քրոմոսոմներից մէկն է, որը պայմանաւորում է մարդու արական սեռը: Այն կարեւոր դեր է կատարում հնագենետիկայում, քանի որ, ի տարբե-

նրանց ժառանգներն են, որ ստեղծել են Հայկական Լեռնաշարհի միջին եւ ուշբրոնզէ, ապա եւ՝ վաղերկաթի դարերի հնագիտական մշակոյթները (Վաղկուրգանային, Թռեղքեան, Սեւան-արցախեան, Կարմիրբերդեան, Կարմիրվանքեան եւ Լճաշէն-մեծամորեան): Այս մարդիկ են, որ պիտի լինէին վաղնջահայերէնի կրողները՝ ձեւաւորուող հայ ժողովրդի լեզուական նախնիները: Միջինբրոնզի առաջին շրջանից յետոյ տեղի է ունենում մշակոյթների որոշակի համահարթեցում: Նկատւում են զգալի փոփոխութիւններ՝ բնակավայրերի քանակական ու որակական աճ եւ անցում նստակեաց կեանքին: Ձեւաւորւում է ուշբրոնզէդարեան եւ երկաթէդարեան միասնական Լճաշէն-մեծամորեան մշակոյթը:

ԼԵՌՆԱՇԱՐՀԻ ԽԵԹԱԼԵԶՈՒ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Ուրարտական դիցարանի երրորդ՝ արեւի աստծու անունն էր Šiuini, որն ըստ Իգոր Դիակոնովի եւ Իւանովի պիտի փոխառուած լինէր խեթերէնին մօտ մի լեզուից, հմմտ. խեթ.՝ šiu- (šiuni-, šiuna-)՝ «աստուած», հնում՝ «արեւի աստուած», šiuatt-՝ «ցերեկ» < *dyeu- լուսաւոր երկնքի աստծու հնդեւրոպական անունից[14]: Շիփնիի պաշտամունքի կենտրոնն էր երկրի մայրաքաղաք Վան-Տուշպան: Այս հիման վրայ Իւանովը կարծիք է յայտնել, որ Վանի շրջանը եղել է խեթական ցեղերի այն հին բնօրրանը, որտեղից նրանք յետագայում տեղաշարժուել են արեւմուտք:

Հայկական անուանաբանութեան մէջ Šiuini անուան հետ համադրելի են *սիւ-/սեւ-* հիմքով տեղանունները (ասորեստանեան եւ նրանից փոխառուած խեթական, խուռիական եւ ուրարտական սեպագրում šով հաղորդուել է s հնչիւնը, իսկ հայերէնում ***եւ*** եւ ***իւ*** երկբարբառները հերթագայում են): Սրանցից առաջին հերթին նշենք Սեւան անունով գետը եւ ամրոցը Վանից արեւելք: Դրանցից շատ աւելի հանրայայտ է Սեւան, հին անունով՝ Գեղամայ լիճը (սկզբնապէս Սեւան է կոչուել լճի կղզին եւ նրա վրայի ամրոցը, եւ յետոյ է միայն այդ անուանումն անցել լճին): Գեղամայ/Սեւանայ լիճը գտնւում էր Սիւնիք/Սեւնիք նահանգում, որի անունն անբաժանելի է թւում Սեւանից (այս ձեւի համար հմմտ. խեթ. šiuanni «աստուածային» բառը): Սիւնիքը հայ.

րութիւն միւսների, փոխանցւում է միայն հօրից որդուն եւ այսպիսով ապահովում երկարատեւ հայրագիծ ժառանգորդութիւնը: Ըստ այդմ, հնդեւրոպական լեզուի առաջին կրողների Y քրոմոսոմային ծիները պահպանուել են տղամարդկանց մօտ: Այդ քրոմոսոմի՝ մէկ ընդհանուր նախահօրից միասնաբար ժառանգուող ծիների բնորոշ խմբերը՝ հապլոխմբերը, նշանակւում են լատինական տառերի եւ թուերի միացումներով եւ հանդէս են գալիս որպէս մարդկանց խմբերի կարեւոր ծինային ցուցիչներ:

[14] I.M. Diakonoff, *Hurrisch und urartäisch*, München, 1971, էջ 81. նաեւ՝ Вяч. Вс. Иванов, "Анатолийские языки," (Անատոլիական լեզուներ) *Древние языки Малой Азии (Փոքր Ասիայի հին լեզուները)*, խմբ.՝ Դիակոնով եւ Իւանով, Պրոգրէս, Մոսկուա, 1980, էջ 131, 136:

արեւ/արեգ արմատով անուանումների առաւել խիտ կենտրոնացման շրջանն է, հմմտ. օրինակ Արեւիք, Արեւեաց տուն, Արեւիս, Արեգունի, Արեւաբուլ, Արեւիկ տեղանունները (սրանցից առաջին երեքը ցեղանուան տեսք ունեն՝ «արեւեաններ»): Սիւնեաց տոհմում Արեւ անձնանունը յայտնի է հինգերորդ դարից. նոյնարմատ անձնանունների մեծ մասը (Արեւիկ, Արեւհատ եւն.) եւս Սիւնիքից է: Ըստ այդմ կարելի է կարծել, որ Սիւնիք < *Siw(i)niyā տեղանունը կապուած է խեթերէն «արեւ, արեւի աստուած» բառի հետ[15]:

Ուրարտական բնագրերում իրենց երկիրը կոչւում է Biainili: Բիաինիլին ներկայացրել է երկրի մայրաքաղաքի՝ Վան-Տուշպայի շրջանը, որը հակադրւում է թշնամական երկրներին: Ուրարտագիտութեան մէջ ընդունուած է, որ Բիաինիլիի Biaina/ Biana հոլովաձեւից է ծագում Տուշպայի յետագայ Վան, սեռ. Վանայ անուանումը (ուրարտ. սեպագիր **b**ին հայերէնում երբեմն համապատասխանում է **վ/ւ**ն)[16]: Բիաինիլին կազմուած է *Biai* հիմքից, *-ni* ածանցից եւ *-li* յոգնակերտից («Biai-ական-ք»): Ըստ այդմ, biaïn կարող է դիտուել որպէս ցեղանուն (հաւանաբար՝ *væy* հնչմամբ): Ըստ Գրիգոր Ղափանցեանի, Բիաինիլի-Վանի հիմքի հետ է կապուած Սիւնիքի Վայոց ձոր գաւառանունը[17]: Այսպիսով, Սիւնիքում, ինչպէս եւ Վանայ լճի արեւելքում, *սիւ/սեւ* եւ *վայ* տարրերով կազմուած տեղանունները հանդէս են գալիս կողք-կողքի: Ընդ որում, պէտք է կարծել, որ Վայոց ձորի առաջին մասը ինչ-որ **վայ* ցեղանուան յոգնակի սեռական հոլովաձեւն է, հմմտ.՝ Հայոց ձոր գաւառի, ինչպէս եւ Տայք (սեռ. Տայոց) նահանգի անուանումները: Այսինքն, հայերէնում օտարալեզու væy ցեղանունը, հնդեւրոպական *-*i(y)o*- ածանցի յաւելումով ստացել է **վայո* ձեւը, որը, վերջնավանկի անկումից յետոյ դարձել է *վայ,* իսկ վերջին **օ**ն պահպանուել է յոգնակի սեռականում: Վայոց ձորը սահմանակից էր Արցախի Վայկունիք գաւառին, որը եւս պէտք է կապուի նոյն ցեղանուան հետ: Հայերէնին բնորոշ է ցեղանուններին -իկ ածանցի յաւելումը, հմմտ. օրինակ՝ *հնդիկ, պարսիկ, խուժիկ, ռուզիկ* ձեւերը (կայ նաեւ միջնադարեան *խայիկ* «հայ» ձեւը): Վայիկը, *-ունի* ածանցով, **ի**ի կանոնաւոր սղմամբ եւ -**ք** յոգնակերտի յաւելմամբ դարձել է Վայկունիք: Այս եւ մի շարք այլ տուեալներ առաւել հաւանական են դարձնում, որ խեթերի հնագոյն հայրենիքը եղել է Հայկական Լեռնաշխարհում եւ մերձակայքում:

ՎԱՂՆՋԱՀԱՅԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՎԱՐԿԱԾՆԵՐԸ

Հայագիտութեան համար կարեւոր է հայերէնի՝ հնդեւրոպական լեզուների շարքում ունեցած տեղի, մայր լեզուից նրա բաժանման եւ Հայկական

---

[15] A. Y. Petrosyan, "The Eastern Hittites in the South and East of the Armenian Highland?" *Aramazd, Armenian Journal of Near Eastern Studies*, IV/1:2009, էջ 63-72:

[16] Ջահուկեան, *Հայոց լեզուի պատմութիւն,* էջ 430:

[17] Г.А. Капанцян, *Историко-лингвистические работы (Պատմալեզուաբանական աշխատութիւններ), հտր. 2,* ԵՊՀ հրատ., Երեւան, 1975, էջ 129-30:

Լեռնաշխարհում գտնուելու ժամանակագրութեան հարցը: Հայերէնը, որպէս հնդեւրոպական քոյր լեզու, առաւել մերձաւոր է յունարէնին, հնդիրանական, ապա՝ բալթիկ-սլաւոնական եւ միւս հնդեւրոպական լեզուներին, շատ հեռու՝ անատոլիական լեզուներից եւ այսպիսով կարող էր ձեւաւորուել մ-այն հնդեւրոպացիների տափաստանային նախահայրենիքում: Դա հաստատւում է նաեւ հնաձիներական տուեալներով:

Այսպէս, Ք.ա. 3րդ հազարամեակի կէսերից, երբ Անդրկովկասում սկսւում են ի յայտ գալ «տափաստանային» ձիների կրողները, Հայկական Լեռնաշխարհի յատկապէս արեւելեան, կենտրոնական եւ հիւսիսային շրջանները դառնում են նրանց կուտակման կենտրոն: «Տափաստանային» հապլոխմբերի հայրագիծ ձիներ ներկայիս Հայաստանի Հանրապետութեան տարածքից յայտնի նմուշներում միջինբրոնզէդարից մինչեւ Ուրարտուի անկման դարաշրջան (Ք.ա. ԻԵ.-Զ. դարեր) կազմում է 75%: Դրանից յետոյ է միայն այդ պատկերը սկսում փոխուել՝ լեռնաշխարհի հիւսիսարեւելեան եւ հարաւարեւմտեան շրջանների բնակչությունը խառնվում է իրար եւ լեռնաշխարհի տարբեր շրջանների ձիական պատկերը նշանակալիօրէն համահարթւում է, միջինում՝ տափաստանային հապլոխմբերի հայրագիծ 30% ժառանգութեամբ, որն ամենաբարձրն է մնացած խմբերի մէջ: *Մինչդեռ* ***Փոքր Ասիայի հին բնակչութեան մէջ իսպառ բացակայում է «տափաստանային» ձիները, եւ այսպիսով, ձիական տուեալները եւս հաստատում են հայերէնի տափաստանային ծագման դրոյթը:***

Երկար ժամանակ գիտութեան մէջ վաղնջահայերին արեւմտեան՝ բալկանեան ծագում է վերագրուել, ըստ հին յունական որոշ աղբիւրների, որոնց համաձայն հայերը Հայաստան են անցել փոքրասիական Փռիւգիա երկրից (Մարկուարտ, Աճառեան, Մանանդեան, Դիակոնով եւ այլք)[18]: Ներկայումս այդ մօտեցումը անընդունելի է. նախ, պարզուել է, որ փռիւգերէնը շատ մօտ է յունարէնին եւ հեռու՝ հայերէնից[19], իսկ հնաձիներական տուեալներն ուղղակի բացառում են Բալկաններից եւ Փոքր Ասիայից Հայկական Լեռնաշխարհ մարդկանց ներգաղթի հնարաւորությունը[20]:

Այսպիսով, ակնյայտ է, որ վաղնջահայերը Հայկական Լեռնաշխարհ եւ մերձակայ երկրամասեր են անցել արեւելաեւրոպական (անտառա)տափաստանային շրջաններից: Նրանք հաստատուել են յատկապէս ներկայիս

---

[18] Պետրոսեան, *Հայ ժողովրդի ծագման,* էջ 142-50:

[19] C. Brixhe, "Phrygian," *The Cambridge Encyclopedia of the World's Ancient Languages*, Cambridge University Press, Cambridge, 2004, էջ 780. նաեւ՝ Օ. Лигорио, А. Лубоцкий, "Фригийский язык," (Փռիւգերէն լեզու) *Языки мира: Реликтовые индоевропейские языки Передней и Центральной Азии (Աշխարհի լեզուները. Առաջաւոր եւ Միջին Ասիայի մնացորդային հնդեւրոպական լեզուները)*, խմբ.՝ Եուրի Կորիակով եւ Ա.Կիբրիկ, Academia, Մոսկուա, 2013, էջ 181:

[20] Այդ մասին մանրամասն տե՛ս՝ Lazaridis, et al, "The Genetic History of the Southern Arc," Suppl., էջ 280. նաեւ՝ Anthony, էջ 11-12:

Հայաստանի Հանրապետութեան եւ մերձակայ տարածքներում: Այս երկրամասը ուրարտական աղբիւրներում կոչուել է Էթիունի կամ Էթիուխի: Ըստ մեր վարկածի, Էթիունին է եղել հայոց օրրանը, նախնական Հայաստանը, եւ նրա անուանումը ուրարտական սեպագիր հաղորդումն է *հայ* ցեղանուան **հաթիո-* նախատիպի (որը պէտք է ծագէր հնդեւրոպական *poti- «տէր» արմատից)[21]: Էթիունիում եւ մերձակայ տարածքներում է կենտրոնացած ուրարտական աղբիւրների հայերէնով ստուգաբանուող անուանաբանութիւնը[22]: Ուրարտուից յետոյ Էթիունի անուանումն այլեւս չի հանդիպում գրաւոր աղբիւրներում, իսկ նոյն երկրամասը հայկական դարաշրջանում կոչուել է Այրարատ: Ազգածին աւանդութեան մէջ Այրարատը հանդէս է գալիս որպէս «հայկական տիեզերքի» կենտրոն: Հայոց ազգածին նահապետերը, սկսած Հայկի անդրանիկ որդի Արամանեակից, ապրում եւ գործում են հիմնականում Արարատեան դաշտում: Այրարատ նահանգը եւ Արարատեան դաշտը դառնում եւ մնում են հայոց քաղաքական, պետական, կրօնական, տնտեսական կենտրոնը մինչեւ մեր օրերը: Այդտեղ է գտնուել հայոց հին մայրաքաղաքների մեծ մասը՝ Արմաւիր, Երուանդաշատ, Արտաշատ, Վաղարշապատ, Դուին, Երեւան:

Տեսականօրէն կարելի էր պատկերացնել, որ հնագոյն հայերէնի կրողները ձեւաւորուել են այլուր, Էթիունիից դուրս, լեռնաշխարհի մէկ այլ շրջանում: Առաջին թեկնածուն, ակնյայտօրէն, լեռնաշխարհի հիւսիսարեւմտեան շրջանն է, ուր Ք.ա. 14-13րդ դարերում խեթական աղբիւրները հաղորդում են Հայասա-Աշցի երկրի մասին: Հայ ցեղանուան հետ նմանութեան պատճառով մի շարք գիտնականների կողմից այդ երկիրը համարուել է հայոց օրրան (Ն. Մարտիրոսեան, Ղափանցեան, Բորիս Պիոտրովսկի, Գ. Մելիքիշվիլի, Սուրէն Երեմեան, Գամկրելիձէ, Իւանով, Գ. Սարգսեան եւ այլք)[23]: Այն, որ այնտեղ կարող էին հնագոյն հայերէնի կրողներ լինել՝ միանգամայն հնարաւոր է: Սակայն այդ երկրի յայտնի անուանաբանութեան մէջ հայերէնով ստուգաբանելի մասը փոքր է (մինչդեռ աւելի ակնառու երեւում են այլ լեզուների հետքեր)[24]: Հայասային յաջորդ դարաշրջանում յաջորդել է ասորեստանեան աղբիւրներում Դայաենի, ուրարտականներում՝ Դիաուխի կոչուող երկիրը, որը Ք.ա. 8րդ դարում նուաճւում է ուրարտական արքաներից եւ դուրս գալիս պատմութեան թատերաբեմից որպէս ինքնուրոյն միաւոր[25] (մինչդեռ Էթիունին մնում է եւ մասնակցում Ուրարտուի կոր-

---

[21] Պետրոսեան, *Հայ ժողովրդի ծագման*, էջ 181-82:

[22] Նոյն, էջ 189-93:

[23] Նոյն, էջ 165:

[24] Ա. Պետրոսեան, «Հայասայի դիցարանի էթնիկական հիմքերը», *Էջմիածին ամսագիր*, 11:2015, էջ 78-98:

[25] Պետրոսեան, *Հայ ժողովրդի ծագման*, էջ 77-82:

ծանմանը)։ Հայասայի մասին հետաքրքիր նիւթ կարող էր տալ հնաձինագիտութիւնը, սակայն տուեալներ չկան[26]։

Առկայ հնագիտական տուեալները յուշում են, որ տափաստանային հնդե-րոպացիները ամենայն հաւանականութեամբ Կասպից ծովի արեւմուտքով՝ Դաղստանով եւ Դերբենդով՝ «Կասպիական դարպասներ»ով են Անդրկովկաս ներթափանցել։ Դաղստանի եւ Անդրկովկասի կապերը վաղբրոնզի դարում շատ սերտ են եղել։ Նախ, Դաղստանը եղել է անդրկովկասեան կուր-արաքսեան մշակոյթի տարածման կարեւոր շրջաններից մէկը։ Դրանից յետոյ այնտեղ ձեւաւորւում է տափաստանային հնագիտական մշակոյթի մի տեղական շրջան։ Մինչդեռ, Հայկական Լեռնաշխարհի հիւսիս-արեւմուտքը, ինչպէս եւ Վրաստանի եւ Փոքր Ասիայի հարեւան շրջանները հնում կազմել են առանձին, Անդրկովկասից տարբեր մի մշակութային մարզ։ Այսինքն, վաղնջահայերն ամենայն հաւանականութեամբ Դաղստանից են անցել Անդրկովկաս եւ այսպիով, տարածուել այնտեղ՝ արեւելքից արեւմուտք ուղղութեամբ։ Մինչեւ հիմա էլ տափաստանային ծինաֆոնդի ամենաբարձր տոկոսները գրանցւում են Արցախի, Արարատեան դաշտի եւ Սիւնիքի բնիկ հայերի մէջ, որը նուազում է հիւսիս-արեւելքից հարաւ-արեւմուտք, ամենացածր ցուցանիշին հասնելով Սասունի եւ Կարինի շրջաններում, իսկ վերջինս Հայասայի մաս է կազմել։ Այսպիսով, հայոց հայասական ծագման վարկածը նաեւ այս տուեալներով չի հաստատւում։ Հայասայից հնաձինական նիւթ չկայ, իսկ Հայասայի ներկայ տարածքի (Էրզրում եւ մերձակայք) բնիկ հայերի (ասենք, ներկայիս Ջաւախքի բնակիչների) ժամանակակից ծինաֆոնդում տափաստանային ներդրումը նուազագոյն է։

ՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ՀԱՊԼՈԽՄԲԵՐԸ ԲՐՈՆԶԷԴԱՐԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ժամանակակից հայերի մէջ, բացի տեղական ծագման Y քրոմոսոմային հապլոխմբերից, առկայ են տափաստանային երկու հապլոխումբ՝ R1b եւ I2, համապատասխանաբար ~27% եւ ~3% մասնաբաժնով (որոնք, այսպիսով առաւել տարածուածներն են մեզանում)։ Յատկապէս կարեւոր է R1b-M269ից ծագած Z2103 ենթաճիւղը, որն անցեալում եւս պէտք է լինէր ամենատարածուածը։ Այդ երկու հապլոխմբերն ի յայտ են գալիս Միջին բրոնզի դարաշրջանում եւ մինչեւ Ուրարտուի անկումը պահպանում իրենց գերակայութիւնը Էթիունիում, կազմելով ընդհանուրի երեք քառորդը։ Վանի թագաւորութեանը յաջորդած դարաշրջանում էթիունցիները եւ լեռնաշխարհի հարաւի ու արեւմուտքի բնակչութիւնը լրիւ խառնուել են եւ առաջացել է համասեռ մի ծինաֆոնդ, ինչպէս ասուեց, 30% տափաստանային հապլոխմբերով։ Բայց եւ այնպէս, R1b հայրական հապլոխմբի ամենաբարձր մակարդակը նկատւում է Արցախում, Արարատեան դաշտում ու Սիւնիքում։ Իսկ

[26] Դժբախտաբար այդ շրջաններից հնաձինական նիւթ չի տրամադրուել ուսումնասիրութեան համար։

տափաստանային հապլոխմբերի ամենացածր եւ հետեւաբար՝ տեղական ծիների ամենաբարձր մակարդակը առկայ է Սասունի (Աղձնիք) եւ Կարինի հայերի մէջ:

ԵԶՐԱՑՈՒԹԻՒՆ

1. Վաղնջահայերէնը սկզբնաւորուել է հնդեւրոպական հայրենիքում՝ Պոնտոս-կասպեան տափաստանային եւ անտառատափաստանային գօտում: Այն չէր կարող ձեւաւորուած լինել այլուր, քանի որ հենց այդտեղ են ձեւաւորուել նաեւ հայերէնին առաւել մօտ հնդեւրոպական՝ յունարէն, հնդիրանական եւ բալթիկ-սլաւոնական լեզուները:

2. Վաղնջահայերէնի կրողները Ք.ա. 3րդ հազարամեակի կէսերից անցել են Անդրկովկաս եւ հաստատուել սկզբնապէս Հայկական Լեռնաշխարհի հիւսիսային եւ արեւելեան շրջաններում: Նրանք եւ նրանց ժառանգներն են, որ ստեղծել են լեռնաշխարհի միջին եւ ուշբրոնզի, ապա եւ՝ երկաթի դարի հնագիտական մշակոյթները:

3. Սկսած գոնէ միջինբրոնզի վերջին շրջանից հնագոյն հայերի կենտրոնական տարածք՝ «Նախնական Հայաստան» է դառնում յետագայ ուրարտական աղբիւրներում Էթիունի կոչուող երկիրը (հիմնականում՝ Մեծ Հայքի կենտրոնական Այրարատ նահանգի տարածքը): Հայոց ազգածագման միւս երկու՝ բալկանեան եւ հայասական վարկածները գենետիկական տուեալների հիման վրայ մերժւում են:

4. Տափաստանային հնդեւրոպացիները ժամանակի ընթացքում խառնուել են տեղի հին բնակիչների հետ, սակայն հայրագիծ ժառանգորդութեան մէջ երկար ժամանակ գերակայել է տափաստանային տարրը. մինչեւ Ուրարտուի անկումը Էթիունիի բնակչութեան մէջ տափաստանային ծագման Y քրոմոսոմային R1b եւ I2 հապլոխմբերը կազմել են ամբողջի 75%ը: Ժամանակի ընթացքում այդ թիւը նուազում է՝ թէեւ ներկայ հայերի մէջ դրանք նոյնպէս առաւել տարածուածն են՝ ընդհանուրում՝ շուրջ 30%, իսկ արեւելեան շրջաններում (Արցախ, Սիւնիք, Արարատեան դաշտ)՝ շուրջ 40%:

THE ORIGINS OF THE ARMENIAN NATION ACCORDING TO THE LATEST ARCHAEOGENETIC RESEARCH

(SUMMARY)

ARMEN PETROSSYAN, ARAM PALYAN
alpehist@gmail.com; araratinfo@gmail.com

Basing their work on the latest paleogenetic findings, the authors propose a new theory on the origins of the Armenian nation.

The authors argue that the proto-Armenian language originated in the birthplace of Indo-European languages, in the steppe and forest belt between the Pontus and the Caspian Sea. It could not have started anywhere else because that is the place where other Indo-European languages which come closest to the Armenian language, like the Greek, Indo-Iranian and Baltic-Slavonic languages, were formed.

During the middle of the 3rd millennium, the bearers of the proto-Armenian language crossed to the Caucasus and initially settled in the northern and eastern regions of the Armenian Highland. They and their descendants are the ones who created the Middle and Late Bronze Age and Iron Age cultures in the Armenian Highland.

As of the later part of the Middle Bronze Age, Etyuni became the primordial and central Armenia of the proto-Armenians. (Basically the central area of Mets Hayk, the Ayrarat District, was called Etyuni in Urartian inscriptions). The other two hypotheses on the origins of the Armenian nation, the Balkan and Hayasa theories, have been refuted lately through paleogenetic data.

In time, the steppe Indo Europeans (the proto-Armenians) were mixed with the local inhabitants, though the steppe element continued to dominate for a long time in the paternal hereditary mode. Until the fall of Urartu (6th century BC) the steppe-originated R1b and I2 haplogroups of the Y chromosome constituted 75% of the population of Etyuni. Gradually this percentage fell, though among current Armenians these haplogroups constitute some 30% of the total, while among the Armenians of the Eastern regions (Artsakh, Sunik and the plain of Ayrarat) they constitute about 40%.